

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎԱԾ՝ ՏԱՐԱՅԱՎՈՐՎԱԾ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 մայիսի 2013 թ.
N 562-Ն

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9.4-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պարտադիր դրոշմավորման ենթակա՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծված և Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ տարայավորված որոշ ապրանքների դրոշմավորման և վերադրոշմավորման կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և կիրառվում է 2013 թվականի հուլիսի 1-ից հետո Հայաստանի Հանրապետությունում արտադրված և Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

6 հունիսի 2013 թ.
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
մայիսի 16-ի N 562-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎԱԾ՝ ՏԱՐԱՅԱՎՈՐՎԱԾ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կանոններին համապատասխան՝ պարտադիր դրոշմավորման կամ վերադրոշմավորման ենթակա են «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9.2-րդ հոդվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրված կամ Հայաստանի Հանրապետություն ներմուծված այն ապրանքները, որոնք անմիջական արտադրողի կամ անմիջական ներմուծողի կողմից իրացվում են 2013 թվականի հուլիսի 1-ից (ներառյալ) հետո:

2. Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքի վրա փակցվում է «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9.2-րդ հոդվածով սահմանված համապատասխան ապրանքախմբի, իսկ դրոշմապիտակների վրա տարողություն առանձնացված լինելու դեպքում՝ նաև համապատասխան տարողության տարայի համար նախատեսված (տվյալ ապրանքախմբի համառոտ անվանմամբ և տվյալ տարողությամբ) դրոշմապիտակ:

3. Դրոշմավորումը կատարվում է պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքի տարայի կամ տարայի կափարիչի վրա՝ սույն կանոնների 6-րդ կետով սահմանված տեղում՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված դրոշմապիտակ փակցնելու միջոցով:

4. Ապրանքի վերադրոշմավորման դեպքում նոր դրոշմապիտակը փակցվում է սույն կանոնների 6-րդ կետով սահմանված տեղում:

5. Դրոշմավորված ապրանքների վերադրոշմավորումը կատարվում է այդ ապրանքների վրա փակցված նմուշի դրոշմապիտակները կիրառությունից հանվելու դեպքում:

6. Ըստ ապրանքախմբերի և ապրանքների տարաների տեսակի՝ դրոշմապիտակները փակցվում են սույն կետի աղյուսակում նշված տեղում:

Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Ապրանքախմբի համառոտ անվանումը	Տարայի տեսակը	Դրոշմապիտակը փակցնելու տեղը տարայի վրա
2201	ջրեր՝ ներառյալ բնական կամ արհեստական հանքային ջրերը, գազավորված կամ չգազավորված, առանց շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելման	ջուր	ապակյա կամ պլաստմասսայե	կափարիչին կամ կողային մակերեսին
2202	ջրեր՝ ներառյալ հանքային և գազավորված ջրերը, շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելմամբ և այլ ոչ ալկոհոլային խմիչքներ	ըմպելիք	ապակյա կամ պլաստմասսայե	կափարիչին կամ կողային մակերեսին
			թիթեղյա	կողային կամ վերին մակերեսին
2203	գարեջուր	գարեջուր	ապակյա կամ պլաստմասսայե	կափարիչին կամ կողային մակերեսին
			թիթեղյա	կողային կամ վերին մակերեսին
2208	2208 ապրանքային դիրքին դասվող՝ մինչև 9 տոկոս սպիրտայնությամբ խմիչքներ՝ ներառյալ ալկոհոլային կոկտեյլները	կոկտեյլ	ապակյա կամ պլաստմասսայե	կափարիչին կամ կողային մակերեսին
			թիթեղյա	կողային կամ վերին մակերեսին
2009	մրգահյութեր և բանջարեղենի հյութեր, չխմորված և սպիրտ չավելացված	հյութ	ապակյա կամ պլաստմասսայե	կափարիչին կամ կողային մակերեսին
			թիթեղյա	կողային կամ վերին մակերեսին
			սովարաթղթի հիմքով	կափարիչին կամ կողային մակերեսին

7. Արգելվում է դրոշմապիտակներով դրոշմավորումը կատարել սույն կանոնների 6-րդ կետով չնախատեսված տեղում:

8. Արգելվում է հաստատված նմուշի դրոշմապիտակների վրա կատարել նշագրումներ (կնիքներով, դրոշմակնիքներով կամ այլ կերպ), դրոշմապիտակները կամ դրանց մի մասը ծածկել անթափանց թաղանթներով (բացառությամբ վերադրոշմավորման դեպքերում կափարիչի (խցանի) վրա հերթական նմուշի դրոշմապիտակով՝ սույն կարգին համապատասխան վերադրոշմավորման դեպքերի): Անթափանց թաղանթներով ամբողջովին կամ մասնակիորեն ծածկված (դրոշմանիշի սերիան, համարը և այլ պաշտպանիչ տարրեր պարունակող մասերը) դրոշմապիտակներով դրոշմավորված կամ նույնականացնող նշումներով նշագրված (հաստատված նմուշով չնախատեսված նույնականացնող նշումներ ունեցող) դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների իրացումը համարվում է որպես չդրոշմավորված ապրանքների իրացում: